Արձանագրություն 3

ՀՀ ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ -22/11 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Արարատ 6.05.2022թ.
Ժ. 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Քենդրջյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Մարտիրոսյան
Ա.Զաքարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Կ. Մելքոնյան

1. Էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի 2-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

1.1. Ընդունել ի գիտություն, որ 2-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած Ա/Ձ Արարատ Դարբինյանը ներկայացրել է գնումների մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

1.2. Հանձնաժողովի քարտուղարը մասնակցի գնումների մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները) և գնահատման թերթիկների երկուական օրինակները տրամադրեց հանձնաժողովի ամդամներին:

1.3. Մասնակցի որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն չի հայտնաբերվել:

Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հաստատել մասնակցի որակավորման գնահատման արդյունքը Ա/Ձ Արարատ Դարբինյան՝ բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

2. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

2.1. Հանձնաժողովը որոշեց.

ա) 2-րդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել Ա/Ձ Արարատ Դարբինյանին՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

բ)ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը հրապարակել օրենքով սահմանված կարգով:

գ) ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքել «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

3.1. ՀՀ ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/11 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը 10:00-ին, հասցեն ք. Արարատ, Շահումյան 34:

- Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձ. նախագահ՝ _____ Կ.Քենդրջյան

Անդամներ՝ _____ Ա. Մարտիրոսյան

_____ Ա.Զաքարյան

Քարտուղար՝ _____ Կ. Մելքոնյան